

նինք եւրոպական ժողովուրդներու համար 1400 cm³ իրր միջին տարողութիւն⁵⁴, պիտի լսենք թէ Հայոց գանգի տարողութիւնը միջինն է: Ռուջլերի⁵⁵ արդիւնքները քիչ մը աւելի մեծ են, վասն զի ինչպէս տեսանք, անոր հաւաքածոյին մէջ երկար գանգեր դոյութիւն ունին: Հայոց գլխի կազմածքը սակայն, ինչպէս առ հասարակ ամէն կարծազլուսի դանդ, յարմարութիւնն ունի աւելի մեծ քանակութեամբ ուղեղ ընդունելու քան միւսնոյն մակերեսով երկարազլուսի դանդ մը: այդ կ'ուզէ արտայայտել անտարակոյս Նանսէն⁵⁶ երբ կ'ըսէ՝ (Հայոց գլխին) «այս կառուցուածքին պատճառաւ՝ գանգի տուփը առանց շատ ծաւալուն ըլլալու կրնայ մեծ քանակութեամբ ուղեղ պարփակել»: Աւելցնենք որ, թէեւ չէ ցուցուած աներկրայ ուղեղի մեծագոյն քանակութեան եւ մտաւոր կարողութեան միջեւ կապ մը, բայց կան նպատակաւոր փաստեր զայն հաւանական ընելու⁵⁷:

Դէմքի չափեր: Գլխի տրամագծի ազդեցութեան ենթակայ են դէմքի չափերը, գլխի բարձրութիւնն ու լայնութիւնը, բնական է, իրենց արտայայտութիւնը կը գտնեն դէմքի համապատասխան մեծութիւններու քով: ուստի մենք Հայոց քով գլխի լայնութեան տրամագիծը կատարեալ ածած գտնելով ի յտուած չափունէ պիտի ենթադրենք արդէն, թէ դէմքի լայնութիւնն ալ նոյն աճումը պիտի ցուցնէ, հետեւապէս Հայերն յինքեան լայնադէմ ժո-

ղովուրդ պիտի ըլլան: Հայոց լայնադէմութիւնը կը հաստատեն հետեւեալ չափերը, սակայն պատճառը ուրիշ մեծագոյն ազդակ մը կը գտնենք:

Դէմքի լայնութիւնը կը ստանանք լծոսկրներու տրամագծէն. իսկ երկայնութիւնը կը չափուի առ հասարակ կզակի ծայրէն մինչեւ քիթոսկրի արմատը⁵⁸, բայց աւելի բարձր կէտ մը իբր միութիւն առնող մարդախօսներ պահաս չեն. այսպէս Շանտր⁵⁹ չափելով մինչեւ կնտիկ իբր միջին միութիւն կը գտնէ 139 հզրդմ. իսկ լայնութիւն 140 հզրդմ., որով դէմքի միջին ցուցիչ կ'ըլլայ 100:70: Է. Պիւսար⁶⁰, որ կը հետեւի Բրոկայի (Փրանս. դպրոց), կ'առնու մինչեւ ophryon կոչուած կէտը (կնտիկէն քիչ մը բարձր) եւ կ'ունենայ 148:74 հզրդմ., 141:82 լայնութեամբ եւ 105:65 դիմանիշով (indice facial): Ջաւախիչլիլի⁶¹ կը չափէ ամբողջ դէմքը մինչեւ մազերու սահմանը եւ 361 հոգւոյ համար կը գտնէ 184 հզրդմ. իբր միջին երկայնութիւն, 144 հզրդմ. իբր միջին երկայնութիւն, 144 հզրդմ. լայնութիւն՝ 78:2 ինքնուրոյն դիմանիշով: Չափուած կէտերու հեռաւորութեան անջրպետի համաձայն ձեռք բերուած արդիւնքներն ալ խոտորում կը ցուցնեն. սակայն նկատի առնելով այդ միութիւններու համեմատութիւնը՝ Ջաւախիչլիլի քով կը գտնենք 2% երկարադէմ, 62% միջադէմ եւ 36% լայնադէմ Հայեր: մինչ Շանտր ունի 11%՝ X—94 դիմանիշով, 22%՝ 95—99, 42%՝ 100—104, 25% 105—X. Ինչպէս կը տեսնուի հակառակ չափելու տարբեր մեթոդին՝ Հայերը բազմութեամբ 100էն վեր կը գտնուին, որ կը նշանակէ թէ մեծագոյն մասով լայնադէմ են: Ռուս մարդախօսներու⁶² արդիւնքը կը վկայէ ասոր. 85—90ի վրայ Տվարեանովիչ ունի 45:7%, Անսերով 50:4% եւ աւելի բարձր 91—96ի վրայ Տվարեանովիչ կը ցուցնէ 47:6%, իսկ Անսերով 33:9%: Դիմանիչի բարձրութեան պատճառը դարձեալ անդամի յատկանշական գծեր ունի իբր հիմք. Հայոց ճակատը երբեմն շատ սահուն երեւոյթ մը կ'ունենայ, ան՝ յարաբերութեամբ ամբողջ դէմքին աւելի կը միտի շե-

⁵⁴ Martin, Lehrbuch, S. 160, 164.
⁵⁵ Contributo, p. 42—47, հետեւեալ բաժանումը կը զնէ X—1200 cm³ = 4 գանգ, 1201—1300 cm³ = 8, 1301—1400 cm³ = 10, 1401—1500 cm³ = 13, 1501—1600 cm³ = 6, 1601—X cm³ = 1, p. 35.
⁵⁶ L'Arménie et le proche orient, Paris 1928, p. 262. Ներուի մեզի հոս յիշատակել ուղեղի մասին անդրազոյն ուսումնասիրութիւն մը՝ C. U. Ariens Kappers, Some correlations between the Brain and the Skull, London 1932, որը հեղինակը նոր ուղի մը կը բանայ կենսաբանական եւ մարդախօսական կրկին կարեւորութեամբ: Կը չափէ ուղեղի մեծագոյն երկայնութիւնը operculum orbitale մինչեւ polus occipitalis, եւ այն հորիզոնականի համաձայն կը ստուգէ Սիլվիան եւ Ռոլանդեան ճեղքերու (fissurae Sylvii et Rolandi) անկիւնները են. բայց հոս արդէն կը տեսնուին զգալի կերպով ցայտուն գծեր կարճադրութիւններու յատուկ: մասնաւորապէս Հայոց վրայ Սիլվիան ճեղքի անկիւնը կը ստանայ 40°—45°50' իսկ Ռոլանդեան ճեղքի անկիւնը կ'ըլլայ 70°—77°. ասոր հակառակ երկարադրութիւնները հազիւ 30° կը ցուցնեն առաջինը եւ 50° վերջինը: Ասով կ'ունենանք առանձին ծանուցիչ մը նաեւ ուղեղի համար, քանի որ ուղեղի ծաւալի ուսումնասիրութիւնները շատ յատկանշական եղբներ չեն ցուցնել երկարազլուսիներու եւ կարճազլուսիներու միջեւ:

⁵⁷ Տես Fr. Bachmaier, Kopfform und geistige Leistung, Zeitschrift für Morphologie und Anthropologie, XXVIII, 1928, S. 1—64.
⁵⁸ Martin, Lehrbuch, S. 160, 164.
⁵⁹ Անուշազրութեան սխալ մը կը գործէ Շանտր, որ էլ 44—45ի վրայ կը զնէ longueur ophryomen-tonnière, մինչդեռ իւր չափերը կը կրեն de la glabelle au point mentonnier վերտառութիւնը, էլ 53—56, ինչպէս որ Յուստալարանի մէջ արդէն կը թուէ, էլ XII: ⁶⁰ Bull. soc., 1912, p. 357.
⁶¹ Archiv f. Anthr., 1925, S. 84—85.
⁶² Journ. russe d'Anthr., 1926, p. 22.

ղակի բարձրանալ գագաթը քան ուղղաձիգ դիմ մը կազմել: Բայց դիմանիչի բարձրութեան մեծագոյն ազդակն է կզակը, որ շատ ստեղծ Հայոց քով իւր լիակատար զարգացման չի հասնիր, այլ կը մնայ առաւել կամ նուազ վոքը, ներս ինկած. մինչդեռ ասոր հակառակ այտոսկրները աչքառու կերպով դուրս կը ցցուին որով յաճախ հայկական կիսադէմը (profil)՝ ձուածեւի կիսածիբը կը ներկայացնէ՝ ներս հակող ճակատով ու կզակով եւ ցցուող միջին դէմքով: Շատ յատկանշական է այս տիպը, որ ըստ երեւոյթին գաւառական դրոշմ՝ կը կրէ, վասն զի յաճախադոյնս կը հանդիպի կենդրոնական Փոքր Ասիոյ եւ Հայաստանի մէջ ծնած հայորդիներու քով: Շանտր⁶³ կզակի կարճ մնարուն արուեստական ազդակ մը կ'ուզէ ընդունել՝ առարկելով Հայաստանի մէջ հայուհիներու կզակի կապը: դժուար է սակայն, որ այդ աւանդական կապը յեղաշրջիչ ազդեցութիւն մը ունեցած ըլլայ, կրնայ առ առաւել չափազանցել կենսաբանական ունակութիւն մը, որ իբր ցեղային առանձնայատկութիւն մը կը նկատուի դէմքին վրայ:

Հայոց արեան ծանուցիչը: Մարդախօսական այս յատկանիշը դեռ շատ նոր սկսած է քննութեան առնուիլ եւ արդէն շօշափելի եղբներ ձեռք բերուած են ցեղերու զանազանութեան մէջ: Թէեւ մինչեւ օրս փոքրաքանակ Հայեր միայն ուսումնասիրուած են այս տեսակէտէ, սակայն շահեկան են ստացուած տուեալները, ուստի փոքրիկ ակնարկ մը կը կցենք հոս:

Արեան բաղադրութեան մէջ կը գտնուանուի չորս խմբաւորում՝ I O, II A, III B եւ IV AB անուանակոչումներով. այդ զանազանութիւնը ոչ միայն բժշկական տեսակէտէ կարեւոր է, այլ տեսնուած է, որ զանազան ժողովուրդներու քով այդ խումբերէն մին կամ միւսը մեծագոյն յաճախութիւն կը ցուցնէ⁶⁴: Հայոց արեան մասին մեզի ծանօթ է միայն մէկ ուսումնասիրութիւն՝ Բժիշկ Է. Ալթուներանի գրչէն լոյս տեսած The Lancet թերթին մէջ (24 Դեկտ. 1927, էջ 1342), վերնագիրն է՝ A note on blood transfusion in Syria, with an analysis of 1149 blood groupings: Հեղի-

⁶³ Recherches, p. 45.
⁶⁴ Տես առ այս՝ L. Lattes, L'individualità del sangue nella biologia, nella clinica e nella medicina legale, Messina 1923. L. H. Snyder, Human blood groups: their inheritance and social significance. Amer. Journ. Physic. Anthr., IX, 1926.

նակը իւր հիւանդանոցին մէջ կրցած է քննել 438 հայերու, 589 արարներու (որոնց թուին մէջ են նաեւ թուրքեր, յոյներ են) եւ 122 հրեաներու արեան բաղադրութիւնը: Իր արդիւնքները հետեւեալ պատկերը կու տան⁶⁵.

	I O	II A	III B	IV AB
Հայ	23 (5%)	230 (53%)	56 (13%)	129 (29%)
Արար	32 (5%)	216 (37%)	129 (22%)	212 (36%)
Հրեայ	9 (7%)	46 (38%)	19 (16%)	48 (39%)

Ինչպէս կը տեսնուի Հայոց քով II A խումբը ամէնէն յաճախագէտն է՝ մինչեւ 53% համեմատութեամբ. այդ խումբը սակայն մարդկութեան մէջ ամէնէն յաճախ հիւսիսային եւ արեւմտեան Եւրոպա կը տեսնուի, այսպէս Գերմանացիներու քով 43:2%, Լեհերու քով 37:5%. մինչ III B տիրող է արեւելեան Ասիոյ մէջ. այդ խումբը Հայոց քով 13% համեմատութիւն կը ցուցնէ (Գերմանացիներու քով 12:5%)⁶⁶: Սակայն երկրորդ մեծագոյն յաճախութիւնը կը գտնենք IV AB խումբին մէջ՝ մինչեւ 29% համեմատութեամբ, մինչ Գերմանացիները 5:3%, Լեհերը 9:1% ունին. կ'երեւայ թէ արեւելեան խոտնուրդի մը արդիւնքն է այդ: Բայց ստուգութեամբ կը տեսնուի թէ II A խումբի մեծագոյն յաճախութիւնը՝ արեան մեծագոյն յաճախութիւնը կը ցուցնէ հիւսիսային Գերմանացիներու հետ:

(Շարունակելի):

ԲԵԼԳԻՍ ԵՒ ՀԵՏԵՐԸ

Է. ԳԼՈՒԽ

Բելգիական Բրիւժ նաւահանգիստը: Հայոց երթեւեկութիւնը: Բելգիացի հնագէտ վանդէն Բիւսֆէի հետազոտութիւնները հայբելգիական յարաբերութիւնների մասին: Վանդէն Բիւսֆէի եւ Հ. Ղ. Վ. Ալիշանի քղապատկերը: Ֆլամաներէն արձանագրութիւններ Հայոց մասին: Կիլիկիացի վերջին թագաւոր Լեւոն Զ-ը Բելգիայում: Բրիւժի անկումը:

ԺԱ.—ԺԵ. զարբերում, Բելգիայի ամբողջ առեւտրական եւ արդիւնարեւրական գործունէութիւնը կենդրոնացել էր Ֆլանդրա գաւառում, որի նաւահանգիստն էր Բրիւժ (Bruge)

⁶⁵ The Lancet, 1927, p. 1343.
⁶⁶ K. Saller, Leitfaden der Anthr., Berlin 1930, S. 207, 251. Eickstedt, Rassenkunde und Rassen-geschichte der Menschheit, Bd. I, S. 62.

կամ Ֆլամաներէն Բրիւգէ (Brugge) : «Միջինդարում՝ Բրիւստ Եւրոպական առեւտրի մեծ ձանադարհների ժամանակէտն էր դարձել»¹ : ԺԳ. դարում նա արդէն այնչափ էր յառաջացել, որ մրցում էր Վենետիկի հետ եւ այդ պատճառով «Հիւսիսային Վենետիկ» տիրոջուն էր կրում : Միեւնոյն ժամանակ շնորհիւ այն կենդրոնական դիրքին, որ նա զբաղում էր Գաղղիայի, Անգլիայի եւ Գերմանիայի մէջ, Բրիւստ միջադպրային դրամական հրապարակ էր եւ Եւրոպայի առեւտրական վճարումները մեծ մասամբ այնտեղ էին կատարում :

Բրիւստ գտնուում էր Զվինսի ծովախորշի վրայ եւ իր նաւահանգիստը, նոյն իսկ իր դիրքը՝ ծովի յառաջխաղացումից ապահովելու համար, ծովեզերքի վրայ բարձր պատուար էր կանգնեցրել : Ծովի դէմ կատարուած այս ձեռնարկն այնքան հռչակ էր ստացել ամբողջ Եւրոպայում, որ ԺԳ. դարի իտալական մեծ հանձարը, Դանտէ, որ ժամանակակից էր, անմահացրել է այդ պատուարն իր «Աստուածային Կատակերգութեան» մէջ² :

Բրիւստ Ֆլամանական քաղաք էր, բայց բնակիչների մեծ մասը օտարերկրացիներ էին, այն երկիրներից եկած, որտեղից ապրանքներ էին բերում այնտեղ ծախելու կամ փոխանակելու : Այս ապրանքներն էին ի մէջ այլոց՝ Անգլիայից բրգեղէն, Հունգարիայից եւ Բոհեմիայից մետաղներ, Ռուսաստանից մորթեղէն, Սպանիայից դանդան եղեր եւ այլն³ : Օտար քաղաքացիների այս բազմութեան պատճառով Բրիւստի քաղաքային վարչութիւնը իր թղթակցութիւնները գրում էր գաղղիերէն, գերմաներէն, անգլիերէն, բայց մանաւանդ լատիներէն, որ Միջին Դարում Եւրոպայի սովորական միջադպրային լեզուն էր :

Բրիւստի Ֆլամանները յարաբերութեան մէջ էին նաեւ Կիլիկիայի եւ մասնաւորապէս Այասի հետ : Վ. Լանդուա իր Trésor des Chartes d'Arménieի Յառաջարանի մէջ գրում է .

«ԺԳ. դարում առուստուրը Հայաստանում (Հայակիլիկիայում) ընդարձակ չափեր էր առել եւ բոլոր օտար նաւագնացներն աղերսում

էին (Հայոց թագաւորից) սլլեւայլ արտօնութիւններ, որ եւ ստացան, աւելի կամ նուազ չափով : Այս աղերսարկու աղբերի թւումն էին նաեւ Բրիւստի ֆլամանները» :

Նոյն ԺԳ. դարումն է, որ սկսել է նաեւ Հայոց երթեւեկութիւնը Բելգիա : Առաջին հայ առեւտրականներն եկել են Բրիւստ 1340ին, եւ բերել են ծախելու կամ փոխանակելու, հայկական եւ առ հասարակ արեւելեան բերքեր՝ ներկեր, համեմներ, դորդեր եւ այլն : Ըստ երեւոյթին նրանք երկար չեն մնացել այնտեղ, որովհետեւ 1354ի արձանագրութիւնների մէջ հայի անուն չկայ : Նրանք 1358—1360ի շրջանում վերադարձել են աւելի մեծ թուով, հաստատուել են հրապարակի վրայ եւ առեւտրական ընդարձակ գործունէութիւն սկսել : Նրանք իրենց ներմուծած արեւելեան ապրանքների փոխարէն, տեղական կամ եւրոպական ուրիշ երկիրներից Բրիւստում ամբարուած զանազան գործուածքներ էին գնում եւ ուղարկում կամ տանում թէ Այաս եւ թէ այն նաւահանգիստներն, Միջերկրական շուրջն, ուր իրենք ձեւեր կամ ընկերներ ունէին :

Բրիւստում միջադպրային առեւտրով զբաղող բոլոր ցեղերը, Միջերկրարանից սկսած մինչեւ Բալտիկեան ծովեզերքում բնակողները, ամէնքն էլ իրենց յատուկ «աղբային սուններն» ունէին, որ լօժա (loge) էր կոչում : Այս կերպով Բրիւստ համաշխարհային բնակավայրի կերպարանք ունէր : Հայերը չեն ուզեցել ետ մնալ եւ կառուցել են նոյնպէս իրենց լօժան կամ «Հայտունը» :

Միջինդարում առեւտրական փոխանակութիւնն այնպէս էր կազմակերպուած, որ օտարերկրացիները պարտաւոր էին միջնորդի ձեռքով գործ ունենալ ուրիշ վաճառականների հետ : Այս միջնորդն էլ պէտք է անպատճառ տեղացի լինէր, եւ Բրիւստից մեծապէս օգտուում էին այս հանդամանքից :

Բրիւստի Սէնտ Օբէր (Saint Obert) վանքի հին արձանագրութիւնների մէջ այսպիսի մի դէպք է պատմուած : «Նիկողայոս անունով Հայր (Niclaise den Hermenier) իրեն ընկերացող բարձրաստիճան եկեղեցականին (prelat) մի կտոր գործուածք (lakine) ընծայեց, իսկ նրանց, որոնք նրա հետ միասին Ս. Սաչի Դուռն (Cruusporte) անցան, 12 լիբա (xij lb.) տուաւ»⁴ : Ո՞վ էր այդ Նիկողայոս. անշուշտ որ եւ է պատգամաւոր, որին առանձին պա-

¹ H. Pirenne, Histoire de Belgique. Գ. հատոր, էջ 211 :
² Dante Alighieri, Inferno XV, 4—6. Ահա այդ տողերի պարզ թարգմանութիւնը. «ինչպէս որ ֆլամանները Ուիտանդի եւ Բրիւստի մէջ, իրենց վրայ խաղացող ծովային ալիքի դէմ թուժք են կանգնեցնում, որպէս զի ծովը փախչի» :
³ Van Bruyssel, Histoire du Commerce et de la marine de Belgique. Bruxelles 1861—1865.

⁴ La Flandre. Bruges 1880, p. 17.

տիւ են տուել եւ որ հնարաւորութիւն է ունեցել ընծաներ տալու պրէլատին եւ ուրիշներին :

Բրիւստի ԺԳ., ԺԴ. եւ ԺԵ. դարերի ներածութեան եւ արտածութեան մասին մի հետաքրքրական վաւերագիր կայ Պարիսի Ազգային Մատենադարանում (Bibliothèque Nationale), որի մէջ յիշուած են թէ ո՞րտեղից, ի՞նչ տեսակ ապրանք էր ներմուծուում : Այս ցուցակի համեմատ՝ Կ. Պոլսից, Երուսաղէմից եւ Եգիպտոսից յետոյ կարգը գալիս է Հայաստանին (Հայակիլիկիա) եւ գրուած է այսպէս՝ «Dou royaume de Hermenie vient cōntons et tote autre espicerie dessus dite», այսինքն՝ «Հայաստանի թագաւորութիւնից ստացուած է բամբակ եւ զանազան համեմեղէն, ինչպէս վերը յիշուած է» . իսկ վերը յիշուածներն են՝ «պղպեղ, ամէն ուրիշ համեմներ եւ bresis, որ ներկելու փայտ է»⁵ :

Բրիւստի կամ աւելի ընդարձակօրէն խօսելով Ֆլանդրայի՝ Միջին Դարում Կիլիկիայի եւ առ հասարակ Հայոց հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը պարտական ենք մի Ֆլաման ուսումնականի, էմիլ Վանդէն Բիւսսէի (Emil Vanden Bussche), որ Բելգիայի պետական զիւանապահն է եղած եւ իրեն նպատակ էր դրած Բելգիայի, մասնաւորապէս նրա Ֆլամանական մասի հնութիւններն եւ պատմական շինութիւններն ուսումնասիրել : Նա 1878ին յօրինել է մի գրքոյկ «Արեւելեան մի խնդիր՝ Միջին Դարում» վերնագրով, որի մէջ քննել եւ հրատարակել է Ֆլանդրայի եւ մասնաւորապէս Բրիւստի՝ Մերձաւոր Արեւելքի հետ ունեցած առեւտրական կապի վերաբերեալ անտիպ վաւերագիրներ⁶ : Այս ուսումնասիրութեան մէջ Բիւսսէ հրատարակել է Ազրիէն Բալտին (A. Baltyn) անունով բելգիացի փաստաբանի 1589ին յօրինած մի զեկուցագիրն եւ դրա հիման վրայ հետեւեալ եզրակացութիւններն է անում .

1. ԺԳ. դարի սկզբում, Ֆլամանները Մերձաւոր Արեւելքի հետ իրենց առուստուրը կատարում էին արեւելքցիների միջոցով, որոնց թւումն են նաեւ Հայերը, ինչպէս կար-

⁵ Le Grand d'Aussy, Fabliaux (3^e édit.). Paris 1829, p. 8.
⁶ Emil Vanden Bussche, Une question d'orient au Moyen Age, documents inédits et notes pour servir à l'histoire du commerce de la Flandre, particulièrement de la ville de Bruges — avec le Levant. Bruges 1878.

դում ենք զեկուցագրի Ֆլամաններէն բնագրում :

2. ԺԵ. դարի սկզբից Փոքր Ասիայից առեւտրականներ են եկել եւ սեպհական գրասենեակներ հաստատել Բրիւստում :

3. Այնուհետեւ Ֆլամաններն էլ նրանց օրինակին հետեւելով գնացել են Մերձաւոր Արեւելք եւ այնտեղ առեւտրական գրասենեակներ հաստատել :

4. Բայց ըստ երեւոյթին Ֆլամանների այս ձեռնարկութիւնը յաջողութիւն չէ ունեցել, որովհետեւ շուտով հեռացել են Մերձաւոր Արեւելքից եւ իրենց ապրանքները ծախել են Բրիւստում Հայերին եւ ուրիշ արեւելքցիներին :

Վանդէն Բիւսսէ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում առաջին անգամ Բրիւստ եկող հայ առեւտրականների մասին : «Մերձաւոր Արեւելքից (levantin, որոնց մէջ են եւ Հայերը), գրում է նա, ամէնից յառաջ հաստատուել են Բրիւստում, այն է 1340ին : Բայց 1354ին մի տարածայնութիւն է ծագել նրանց եւ Բրիւստի քաղաքացիների մէջ եւ այս արեւելքցի ստիպուել են թողնել ու հեռանալ : Նրանք գնացին Դորդրէխտ (Հոլլանդայում), ուր մի քանի տարի մնացին եւ այս միջոցին նրանց հեռանալուն առիթ տուող խնդիրը հարթուելով նրանք ետ դարձան եւ 1358ին վերջնականապէս հիմնուեցան եւ իրենց գրասենեակը հաստատեցին : Նրանք (Հայերը) 1478ին մի փառաւոր տուն կանգնեցին դոթական ոճով շինուած, որի 4 անկիւնի վրայ 4 աշտարակ էր բարձրանում . . . : Այս արեւելքցիները իրենց եկեղեցական պաշտամունքը կատարում էին Կարմելիտան կրօնաւորների (Carmes) մատուռում : Այս տունը կանդուն էր մինչեւ ԺԸ. դար եւ ապա քանդուեց . . . : Բրիւստի քաղաքային զիւանուած պահուած հաշիւների համաձայն 1340ից էլ յառաջ այն է 1322ին այն «արեւելքցիք» սկսել են Բրիւստ գալ . . . : Այս առեւտրականների հետ յաճախ գալիս էին «անարժէք» անձնաւորութիւններ, ողորմելի «թափառականներ», որոնք եթէ «կուրնների մէջ իրենց սպիւնները չէին թողնում», նրանք բեռ էին դառնում քաղաքների, զգեակների եւ ասպետների վզին : Այսպիսի անարժէքներ կային եգիպտացիներից, յոյներից, վալախներից, հրէաներից, հնդիկներից եւ այլն : Նրանց կարգում յիշուած են նաեւ մի քանի Հայեր, բայց անուններ չեն նշանակուած : Այս վերջինները եկել են 1447—1448 տարիներում . . . : ԺԵ. դարում հայերի հետ

միասին թուրք վաճառականներին եւս իրաւունք է տրուել St. Domat մայր եկեղեցու մեծաւորի կողմից, իրենց ապրանքը, գորգ եւ ուրիշ թանգարժէք իրեր ծախել եկեղեցու առջեւ. բայց թուրքերը ժողովրդի մոլեռանդութեանը զո՞հ դարձան. ոչ նրանց, ոչ էլ արաբներին եւ մարոքցիներին չէին սիրում իրենց կրօնի պատճառով. հետեւաբար մահմետականները չկարողացան այս քաղաքում (Բրիւստում) տեւական յարաբերութիւններ հաստատել, թէեւ քաղաքապետը նրանց էլ միւսներին հաւասար կերպով էր պաշտպանում: Նոյն իսկ կղերը հակառակ չէր...»: Փիլիպպոս Գեղեցիկի (Philippe le Beau 1482—1506) թագաւորութեան ժամանակ, Բրիւստում Հայեր եւ ուրիշ արեւելքցի չէին մնացել...»⁷:

Մեր արդիւնաշատ մատենագիրը՝ Հ. Ղ. Ալիշան, այդ թուականին նոյնպէս զբաղած էր հետազոտելով Հայոց յարաբերութիւնները Միջին Դարում եւրոպական երկիրների եւ ի մէջ այլոց Բելգիայի հետ: Նա պատրաստում էր իր Սիսական եւ Սիսուան բովանդակալից աշխատութիւնները: Ուստի նա գրում է այս Բելգիական պետական գիւժնագրահին (archiviste) եւ շատ սիրալիւր մի նամակով հարցնում է թէ «Հայերը ժ.Գ.ից մինչեւ ժ.Չ. դարերը ունեցել են առեւտրական յարաբերութիւններ Ֆլանդրայի եւ մասնաւորապէս Բրիւստի հետ»: Ալիշան՝ Բելգիացի պատմաբան-հնագէտին սիրաշահելու համար իր նամակի հետ նրան նուէր է ուղարկել մի օրինակ Վ. Լանդուայի՝ Trésor des Chartes d'Arménie, հոյակապ հաւաքածոյից (Վենետիկ 1863): Բիւսքէ մեծապէս ուրախացել է այս նուէրից, որովհետեւ, խոստովանում է ինքն իսկ, այս հաւաքածոն «չափազանց օգտակար է արեւմտեան երկիրների՝ Արեւելքի հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների ուսումնասիրութեան համար, մանաւանդ որ ինքն էլ իր մինչեւ այն ատեն կատարած աշխատութեան հաստատութիւնն է գտել այնտեղ»: Իբրեւ պատասխան՝ Բիւսքէ Ալիշանին ուղարկել է իր վերոյիշեալ «Une question d'Orient au moyen âge» գրքովը: Այնուհետեւ թղթակցութիւնը երկու գիտնականների մէջ շարունակուում է. յառաջ բերեմ նրա էական մասերը, ինչպէս որ Բիւ-

զիացի գիտնականը հրատարակել է իր՝ համարաւոր La Flandre ամսագրի մէջ⁸:

Հ. Ալիշան 1880 Յունիս 23ին գրում է նրան. «Je soupçonnais que notre pauvre nation l'Arménie, devait avoir été représentée parmi les Levantains, commerçant avec Bruges. Votre ouvrage, que j'ai parcouru avidement, bien que ne comprenant pas les passages en flamand, m'a confirmé dans mon opinion» եւ յետոյ ի մէջ այլոց աւելացնում է. «Dans vos minutieuses recherches dans les archives, auriez-vous rencontré quelque document concernant plus ou moins directement l'Arménie».

Ալիշանի այս նամակն առիթ է տալիս, որ Վանդէն Բիւսքէ լրջօրէն զբաղի նրա յարուցած հարցով եւ իբրեւ իր հետազոտութիւնների արդիւնք մի նոր Գլուխ է գրում նոյն տարին (1880) իր ամսագրում «Les Arméniens» վերնագրի տակ, իբրեւ յաւելուած իր յիշեալ Une question d'Orient au Moyen âge աշխատութեան: Այս յօդուածում նա պատասխանում է Ալիշանին հետեւեալ տողերով. «Եթէ մեր յարգելի թղթակիցն այս հարցումով ի նկատի ունի՝ diplômes, chartes, lettres-patentes, octrois կամ որ եւ է այլ վաւերագիր վեհապետական իշխանութիւնից տրուած, ցաւ ի սիրտ պիտի առենք, որ մեր պատասխանը բացասական է: Բելգիայի ոչ մի արքունի գիւժնում եւ ոչ էլ գաւառական գիւժնեւում, այդպիսի վաւերագիրներ՝ անուանապէս Հայերէն տրուած, չկարողացանք գտնել, թէեւ բոլոր գիւժնները փնտռեցինք»: Հեղինակը յետոյ անցնում է Trésor des Chartes d'Arménieի վերլուծման, յատկապէս Փլամանների վերաբերմամբ: Լեւոն Բ. թագաւորի 1214 Ապրիլ 23 թուով հրովարտուած (որով Լեւոն յայտարարում է թէ մի գումար փոխ է առել եւ իբրեւ երաշխաւորութիւն իր հողերի մի մասը գրաւ դրել) յիշուած է Willemus de Insula անունը: Այս Վիլլէմուսը Փլաման ասպետ էր, որ Անտիոքի իշխան Բոնէմունդի մահից վերջը՝ անցել էր Լեւոն Բ.ի ծառայութեան: Նոյն Լեւոն Բ.ի Իննովկենտիոս պապին դրած նամակում, 1205ին, որտեղ թագաւորը գանգատուում է կարգինալ Pierre de Saint Marcelի վրայ, յիշուած է թէ

⁷ La Flandre, Revue des monuments, 1878, Bruges, p. 201—222.

⁸ La Flandre, Revue des monuments d'histoire et d'antiquités. Directeur Vanden Bussche, archiviste de l'Etat. Bruges 1880.

Կիլիկիայում ընդհանուր ժողով է կայացել, որին մասնակցել է Ֆլանդրայի կոմսուհին:

Այնուհետեւ Վանդէն Բիւսքէ յառաջ է բերում Հայոց վերաբերեալ իր գտած արձանագրութիւնները:

Ժ.Գ. դարից փախստական հայեր սկսում են Եւրոպա գալ: Բելգիացիք 1346ին նրանց համար մի տուն են կառուցել Բրիւստի շրջակայքում, որպէս զի «անտուն եւ անտեղ ճանապարհորդներն այնտեղ պատսպարուին»: Այս ապաստանարանը պատկանել է Բրիւստի Saint Bavon մայր եկեղեցուն, որի մատենարանի մէջ մի արձանագրութիւն կայ 1386ից, Փլամաններէն լեզուով, որտեղ ասուած է. «daer up dien tydt waren vele arme rudders ende ook landfloopers ende ook Giptenaers ende vremde luyen uyt Armenien ende Asien, vluchtende de Sarrasijnen ende comende ten groten ghetalle in desen lande»: (Այն ժամանակ կային բազմաթիւ աղքատ ասպետներ, ինչպէս նաեւ թափառականներ, նոյնպէս եւ Եգիպտացիներ եւ օտարականներ, որոնք գալիս էին Հայաստանից եւ Ասիայից: Նրանք փախչում էին սարակինոսներից եւ մեծ թուով գալիս էին այս երկիրը:)

Այդ թուականից էլ յառաջ, այն է 1321—1322ից Բրիւստի Rouge Cloître նշանաւոր վանքի երկու կրօնաւորներին վերագրուած մի Փլամաններէն արձանագրութիւն կայ, որտեղ ասուած է. «doden de Sarrasijnen groote schade den Kerstenen in Cipers ende in Armenien. Ende de coninck von Cipers sant aen den paws Jan den XXij om hulpe». (Սարակինոսները մեծ չարիք էին հասցընում Կիպրոսի եւ Հայաստանի քրիստոնեաներին եւ Կիպրոսի թագաւորը՝ Յովհան Ի.Ֆ. Պապի օգնութիւնն է խնդրել:)

Նոյն թուականին, մի ուրիշ արձանագրութեան մէջ ասուած է. «op dit jaer soe doode de coninck van Armenien dusent Sarrasijnen». (Այն տարին Հայաստանի թագաւորը հազար Սարակինոս սպանեց:)

Բրիւստի մերձակայ Դամմ եւ Եկլիւզ նահանգիտների հին զբոսական հաշիւների մէջ շատ անգամ են պատահում հայ եւ Հայաստան անունները՝ Hermanie, Harmenie, Ermeniers ձևերի տակ, որոնց զբոսական նպաստ է տրուել: Մի տեղ, 1447ի արձանագրութեան մէջ ասուած է թէ նպաստ է շնորհուած Հայաստանցի քահանաներին (priesters uut Hermenie), որոնք եկել են Բելգիա:

Վանդէն Բիւսքէ՝ Հայոց վրայ գրած այս յօդուածին իբրեւ վերջաբան յառաջ է բերում պատմաբան Ֆրուասարի մի ընդարձակ տեսութիւնը՝ հին Փրանսերէնով գրուած, Լեւոն Գ. Լուսինեանի վրայ, երբ մեր այս վերջին թագաւորը գտնուում էր Եւրոպայում 1378ին: «Pour ces jours, ասուած է այնտեղ, estoit aveue le roy de France le roy Lion d'Ermenie, et estoit tout nouvellement revenu de Grèce et de dessus les frontières de son pays». Այստեղ՝ այն է հետաքրքրական, որ Եւրոպայի աղետականներ, այս ճանապարհորդութեան ժամանակ Լեւոնին մի տեսակ հարցաքննութեան են ենթարկել եւ նա նրանց բոլոր հարցումներին պատասխանել է անկեղծօրէն, պատմելով իր արկածներն եւ բացատրութիւններ տալով Հայաստանի այն ժամանակի քաղաքական կացութեան մասին...:

Լուսինեանի վրայ խօսող այս առաջին բելգիացի պատմիչը՝ Ֆրուասար (Froissart), որին բելգիացիք «մեր հին ժամանակագիրների հայրն» են կոչում, Լեւոնին կոչում է նաեւ Livon V. եւ Lionnet de Lusignan: Ֆրուասարի այս ժամանակագրութիւնը հրատարակուած է Բելգիացի մեծ պատմաբան Kervyn de Lettenhoveի 24 հատորից բաղկացած ընդարձակ Պատմութեան մէջ (Bruxelles 1870—1877):

Լեւոն Զ. 1378ի այս ճանապարհորդութիւնից յետոյ դարձեալ եկել է Բելգիա: Իպր (Ypres) քաղաքի արձանագրութիւնների մէջ ասուած է թէ երբ 1385ին Կարոլոս Զ. Դամմ քաղաքն էր պաշտպանում թշնամիների դէմ, նրա հետ էր նաեւ «Հայաստանի թագաւորը»⁹:

Հայ գաղութի Բրիւստից հեռանալու գլխաւոր պատճառն այն էր, որ նա ժ.Յ. դարի վերջերը սկսել էր կորցնել իր կարեւորութիւնն իբրեւ նաւահանդիստ: Մովեղերքն այնպէս էր լցուել աւաղով, որ նաւերն այլ եւս չէին կարողանում մօտենալ որով ամբողջ նաւազնացութիւնը դադարել էր:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒՍԱՆ



⁹ Kervyn, Table analytique des noms historiques, T. XX, p. 111.